# Տարածական վիշապ թղթից



Տարածական հետաքրքիր պատրաստվածքների շարքից ձեզ ենք ներկայացնում վիշապի պատրաստումը։ Այն իրականացնելու համար անհրաժեշտ է պարզապես ներբեռնել շաբլոնը, տպել այն թղթի վրա և հետևելով հրահանգներին, ճիշտ կտրել, ծալել ու սոսնձել համապատասխան տեղերը։ Արդյունքում կստանաք ահա այսպիսի վիշապ.



**Նյութեր և պարագաներ**



- մկրատ, գրասենյակային դանակ
- սոսինձ

- քանոն
- մատիտ
- գծանշելու պարագա, օրինակ գնդիկավոր գրիչ
- ատամնաքրիչ չոփիկ
- ունելի

Զգուշացում

Փորձիկ.am

Այս աշխատանքային պարագաները կարող են վտանգավոր լինել երեխաների համար: Այդ իսկ պատճառով, աշխատանքի ընթացքում խստորեն հետևեք անվտանգության կանոններին և անհրաժեշտության դեպքում խնդրեք մեծերին, որպեսզի օգնեն ձեզ:

***Շաբլոնն իրական չափսով ներբեռնելու համար ակտիվացրեք նկարը***



Վիշապը պատրաստելու քայլերը.



Աշխատանքային կանոնները.

## Պայմանական նշաններ




## Խորհուրդներ



- Որպեսզի չկորցնեք աշխատանքի հաջորդականությունը, խորհուրդ է տրվում մատիտով յուրաքանչյուր մասի հակառակ կողմին նշել հերթական համարը
- Օգտագործեք գնդիկավոր գրիչ կամ այլ ոչ սուր ծայրով հարմարանք և քանոն՝ ծալքի գծերն ընդգծելու և ծալքերը կոկիկ իրականացնելու համար

- Մինչև սոսնձելը կատարեք անհրաժեշտ ծալքերը և, եթե անհրաժեշտություն կա, կորություն հաղորդեք թղթին, ապա քսեք սոսինձը
- Փոքր դետալները սոսնձելիս օգտվեք ունելիից